կը համարին։ Թողումք մեք ցունաց և թաթարաց բողոքները, թարգմանեմք միայն Հայոց տուած աղերսագիրը[1] առ Շահան-Գերէյ. «Մեք երեք «հարիւր[2] տարիէ 'ի վեր Ձեր ծառայքն և հպա- «տակքն եմք, և գոհ կերպով կը բնակիմք Ձեր «տէրութեան մէջ, և երբեք անհանգստութիւն մի «կրած չեմք. այժմ կ'ուզեն քշել հանել զմեզ աստի։ «Ցանուն Աստուծոյ, մարգարէին և Ձեր նախնեաց՝ «կը պաղատիմք, այդ բռնութենէ ազատեցէք զմեզ «Ձեր ստրուկները, մեք միշտ աղօթող պիտի լի- «նիմք Ձեր կենաց համար առ Աստուած»։

Այս սրտառուչ աղերսագրոյն խօսքերը, եթէ բոլորը յանկեղծ սրտէ չհամարիմք, սակայն և այնպէս յայտնի ցոյցք են մեր պապերուն կրած տագնապին և վրդովմանց՝ և միանգամայն նախահոգ սրտին։ Թողուլ տուն տեղ, դարևոր իրենց հայրենիք դարձած աշխարհքը, այգիներ, անտառներ, պարտէզներ և գեղեր, և որ առաւելն է սրբաշէն եկեղեցիներ, իրենց լուսաղբիւրներով և հոգեհատոր սիրելեաց գերեզմաններով, և երթալ անծանօթ աշխարհք, որոյ ժողովրդոց ոչ բարքը և ոչ լեզուն կը հասկընան, շատ դժար և անտանելի բան է։ Շահան-Գերէյ ոչ իրեն հաւատարիմ հպատակաց, Հայոց, աղերսը կը լսէ և ոչ թաթարաց բողոքներուն տեղիք կու տայ, այլ անտարբեր աչք կը դիտէ իւր և իւր աշխարհին կործանումը։ Թա-

1 Խառթախայի ռուս թարգմանութենէն։

2 Վերջին և մեծ դաղթականութենէ ետ հաշուելու լինիմք, որ եղած է 1330 ին մինչև 1778, յորում ելած են Հայք 'ի Ղրիմէ, աղերսագրին մէջ վերոյիշեալ երեքհարիւր ամաց հաշիւն 448 տարի կը լինի։